Հավելված N 2
2023 թվականի հունվարի 23-ին կնքված
«1032-11002/23-Տ» պայմանագրի

# ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N1

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Ծրագրի անվանում | Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ |
| Դրամաշնորհի N | ԱՍՀՆ-ԴՄ-ՏՊԽԾ-23/4-1 |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ ԱՍՀՆ |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Տարեցների առողջության և խնամքի ապահովման ասոցիացիա» ՀԿ |
| Ծրագրի իրականացման ժամանակահատված | 01.01.2023-31.12.2023 |
| Հաշվետու ժամանակահատված | 01.01.2023-31.03.2023 |
| Ներկայացման օր | 11.04.2023 |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Արթուր Թորոսյան, նախագահ |

2. Բովանդակային հաշվետվություն

2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

1. Շահառուների ներգրավում, ծառայության մատուցման պայմանագրի կնքում, անհատական կարիքի գնահատում, խնամքի անհատական պլանի կազմում
2. Կենցաղային սպասարկման ծառայության մատուցում
3. Բժշկական օգնության և սպասարման ծառայության մատուցում
4. Սոցիալ-հոգեբանական, խորհրդատվական ծառայության մատուցում

2.2. Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:

Ծրագրի սոցիալական աշխատողի և ՄՍԾ Իջևանի տարածքային կենտրոնի համագործակցությամբ ծրագրում 25 շահառուի փոխարեն ընդգրկվել է ընդհանուր առմամբ 30 խոցելի, կողմնակի անձի օգնության կարիք ունեցող մեծահասակ, որոնցից 20-ը բնակվում է միայնակ: Բոլոր շահառուներն ունեն ՄՍԾ ուղեգիր:
Վերանայվել է շահառուների սոցիալ-առողջական վիճակի գնահատման գործիքը և համալրվել մասնագիտական նոր սանդղակներով և հարցարաններով: Վերջիններս թույլ են տալիս օբյեկտիվ պատկերացում կազմել շահառուի առողջական, սոցիալական և հոգեբանական վիճակի մասին, համապատասխանաբար ընտրել խնամքի տեսակը և ծավալը, բացահայտել իրական կարիքները և ծառայություններն ավելի հասցեական ու արդյունավետ մատուցել: Գնահատման արդյունքում կազմվել է շահառուների խնամքի անհատական պլանը, յուրաքանչյուր շահառուի հետ կնքվել է ծառայությունների մատուցման պայմանագիր:
Նախատեսված էր կազմակերպել էքսկուրսիա Իջևանի երաժշտական դպրոց՝ ունկնդրելու երեխաների նվագախմբի ելույթը: Այցը, սակայն, հետաձգվել է. շահառուները մերժում են էքսկուրսիայի առաջարկները հիմնականում տկարության, տնից դուրս գալու ցանկության բացակայության և ցուրտ եղանակի պատճառաբանությամբ: Նախատեսված է, սակայն, բացը լրացնել հաջորդող եղանակային ավելի բարենպաստ ամիսների ընթացքում՝ շահառուներին աջակցելու հարցում ներգրավելով նաև  կամավորների ԵՊՀ-ի Իջևանի մասնաճյուղի «Հոգեբանություն» կրթական ծրագրի ուսանողներից:
Հաշվետու ժամանակահատվածում շահառուներին մատուցվել են ծրագրով նախատեսված ծառայությունները՝ կենցաղային սպասարկում, բուժքույրական սպասարկում, սոցիալ-հոգեբանական, խորհրդատվական ծառայություն: Վերջիններս մատուցվել են ըստ նախապես որոշված ժամանակացույցի և ըստ անհրաժեշտության՝ արձագանքելով շահառուի կանչին: Ծառայությունները մատուցվել են շաբաթվա բոլոր օրերին՝ ժամը 09:00-18:00-ն ընկած ժամանակահատվածում, առանձին դեպքերում, ըստ շահառուի հրատապ կարիքի, նաև այդ ժամանակահատվածից դուրս ժամերի: Սպասարկող անձնակազմում ընդգրկվել է մեկ սոցիալական աշխատող, երկու սոցիալական սպասարկող և երկու բուժքույր (0,5 հաստիքային միավորով):

Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)

Առկա չեն:

2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:

Որպես խոչընդոտ առանձնացվում է Իջևան քաղաքում Ասոցիացիայի գործունեության տարածքի բացակայությունը: Հարցը քննարկվել է Իջևանի քաղաքապետի հետ, բանակցային փուլում է:

2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):

1. Կենցաղային սպասարկման ծառայության մատուցում
2. Բժշկական օգնության և սպասարման ծառայության մատուցում
3. Սոցիալ-հոգեբանական, խորհրդատվական ծառայության մատուցում

2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:

Գործողությունները հիմնականում իրականացվել են ըստ նախատեսված պլանի: 25 շահառուի փոխարեն ծրագրում ընդգրկվել է 30-ը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
Գլխավոր քարտուղար՝ Ս. Մուրադյան

---------------------------------------------
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Տարեցների առողջության և խնամքի ապահովման ասոցիացիա» հասարակական կազմակերպություն
Նախագահ ՝ Ա. Թորոսյան

Digitally signed by GHAZAZYAN LIANA 6201810706
Date: 2023.04.11 17:37:40 AMT

---------------------------------------------
(ստորագրություն)

Կ.Տ.